



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱԿՏ. Բարձրագ. Թ. Կթ. Կթ. Կթ.
Հն-խն Ա. Խն

ԹԻԻ 42

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ԲԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԻ

12 ՄԱՅԻՍ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲՈՒՐԲՃՆԱՆ

— 1872 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԽԲ.

12 ՄԱՅԻՍ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Խ. ՕՍԿԱՆԵԱՆ ԷՖ. (Առ ժամանակեայ կարգեալ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Նորոգ ընտրութիւն Ազգ. վարչութեան Քաղ. ժողովոյ :
2. Ընտրութիւն Նորոգ Գիւանի Ընդհ. ժողովոյ :
3. Ատենական Կանոնադրութիւն :
4. Կաթուղիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք :

Ատենական բանալու որոշեալ ժամն անցնելով եւ Ատենապետներէն ոչ ոք ներկայանալով, քստ առաջարկութեան Նախագահ Սրբազան Հօր առ ժամանակեայ Ատենապետ կը կարգուի Սականեան Խաչատուր Էֆէնտին, որ կը բանայ ատենանը ժամ 7 ին 'ի ներկայութեան 47 երեսփոխանաց, որոց թիւն 'ի վերջոյ 66 ի կը յանդի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենանը բացուելէ ետեւ թէ եւ սովորութիւն է անմիջապէս նախորդ նստին ատենադրութիւնը ներկայացնել 'ի դիտողութիւն երեսփոխանաց, բայց դեռ պատրաստ չըլլալուն համար կանցնիմք ուրիշ խընդրոյ :

Նախ հրաժարականի խնդիր մը կայ, զոր Ատենադպիր Էֆ. պիտի բարեհաճի ներկայացնել :

ՀՐԱԺԱՐԱԳԻՐ ՏԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼ ՊԷՅԻ

ԱՏԵՆԱՂՊԻՐ ԷՖ. — Տատեան Առաքել Սիսակ

Պէյի հրաժարադիրը կար նախընթաց նստէն, որ 'ի սկզբան չներկայացուեցաւ մեծադոյն մասի չզոյութեան համար, եւ վերջն ալ ժամանակի պատեհութիւն չգտաւ Գիւանը. ահա ատիկ այժմ կը ներկայացնեմք :

Ամենապատիւ Սրբազան Հայր

Քուժ-Դատուի միացեալ թաղեցւոց կողմանէ ազգային երեսփոխան ընտրուիլս եւ Ընդհ. ժողովոյ վաւերացուժնուաստիտ ազգ առնել եւ միանգամայն սոյն բարձր պաշտօնս չնորհաւորելով այս աւուր նստին ներկայ գտնուիլս հըրամայել չնորհք ըրած էք Ձեր Սրբազնութեան ամուսյս 29 թուով հրամանադրով Եւ խորին չընորհակալութիւնս Ամենապատիւ Սրբազնութեանդ եւ վերոյ նշանակեալ միացեալ թաղեցի Համազգայնոցս յայտնելով, կը փութամ ազերեսել Սրբազան Հօրդ թէ՛ ազգային երեսփո-

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՅ. — Կրսեն թէ ընտրութիւնն ըստ տասին Սահմանադրութեան պէտք է կատարուի, եթէ այդպէս պիտի ըլլար, ինչու երկու նստէ 'ի վեր վիճարանութիւն կրնուիք:

Տ. ԱՄՏՐՈՍԻՍՈՍ ՎՐԿ. — Ես կրքով չխօսեցայ, ինչու այդպէս կը խօսին ինձ դէմ . . .

(Կրքէւլ - Կրքէւլ)

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՅ. — Ընդհ. ժողովոյ մէջ կարծեաց անհամաձայնութիւն մը տիրած է այս վայրկեանիս: զոր քուէն միայն կարող է լուծել Մէկ կողմէ կը պնդուի օրինաց գործադրութեան վրայ, միւս կողմէ փորձառութեան եւ Ընդհ. ժողովոյ նախորդ մէկ որոշման վրայ, որքու համար որոշում չէր կրսեն, բայց պէտք է գիտնալ որ 3 տարի առաջ որոշում մ'եղած է 23 Երեսփոխաններով, զոր այս Ընդհ. ժողովն ալ վերահաստատեց անցեալ տարի հրատարակել Քաղ. ժողովը վերակազմելու առթիւ . . .

Չանադան ձայներ (Ընդհ. Ընդհ.) — Այլ . . .

Պէկեան էֆ. տեղը կը նստի եւ Ատենապետ էֆէնտին խօսքն ուրիշի կուտայ: Պէկեան էֆ. կը հակառակի, եւ իւր առաջարկութիւնը քուէի դնելու այնուհետեւ իրեն խօսք տալ կը պահանջէ:

ՄԱՄԻՆՈՍԵԱՆ Մ. ԷՅ. — Ար եւ երբ օրինաց գէժ զնդում եղած է, հոն դուռարութիւնը չեն պակասած, այս պատճառաւ է որ երկու նստէ 'ի վեր ժամավաճառ կըլլամք. իբրաւ է որ ասկէ առաջ օրէնքէն չեղում մ'եղեր է, բայց քանի որ իբրեւ օրէնք չէ հրատարակուէր, չեմք կրնար ընդունիլ եւ շարունակել յաւիտեան:

ՉԱՏԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Պէկեան էֆ. կըսէ թէ հրատարակել Քաղ. ժողովոյ ընտրութեան ատեն Ընդհ. ժողովն օրինաց այն մասը փոխած է 1870 Յունուար 23 ի Ընդհ. ժողովոյ մէջ, 29 Երեսփոխանաց ներկայութեամբ, երբ այդ երեսփոխանաց շատերուն պաշտօնավարութեան շրջանը լրացած էր, երբ նոյն ինքն Օգոստէն էֆ. ըսած էր այն օրը թէ այսօրինաւ օրութեամբ նստած եմ այս երեսփոխանական ասեմոյն վըրայ, այդ նստին մէջ, կրսեմ, Սրբազան Նախագահն առ ժամանակեաց կերպիւ քանի մի անձինք իրեն գործակից տրուելու համար առաջարկութիւն ըրեր է, եւ Ընդհ. ժողովն ալ իրեն բացառութիւն 'ի գործ զրեր է: Միթէ այն օրուսն եղածը նոր օրէնք կրնայ ըլլալ, անկէ առաջ Նաոն ժողովներ ալ գրուած էին, բայց ասոք օրէնքի տեղ կրնամք դնել:

Նուստիքեան էֆ. ըսաւ թէ երբ իրենք նախորդ Քաղ. ժողովոյ պաշտօնին կոչուեցան, իրենց պաշտօնական յայտարարութեամբք ծանուցած են որ Սահմանադրութեան չէ թէ տառական գործադրութեանն, այլ օգուոյն պիտի հետեւին. այդ խօսքն ալ մեզ համար օրէնք չկրնար ըլլալ, լոկ իրենց անձնական կարծիքն

է այն: Նմանապէս՝ Աղարէզեան Վարկոս էֆ. ալ ըսաւ թէ այս Սահմանադրութիւնն ազգային չէ. այդ խօսքն ալ չեմք ընդունիր:

ԱՂԱՔԷԳԵԱՆ Մ. ԷՅ. — (Ընդհ. Ընդհ.) — Այո, ազգային չէ՛ կրսեմ, եւ պէտք է համազգային լինի:

Ամբրոսիոս Վրգ. կը բողոքէ Աղարէզեան էֆ. ի դէմ, եւ վէճ մը կը բացուի մէջերնին:

Նախագահ Սրբազան շորգոր կը կարգայ Ամբրոսիոս Վրգ. ին ըսելով թէ իբր Աւետարանի պաշտօնեայ հեղ լինիլ կը վայելէ իրեն:

Սակայն Ամբրոսիոս Վրգ. շննսար Սրբազան Նախագահին եւ կրմբոսասանայ Նորա գէժ, ուստի եւ Սրբազան Նախագահ կը հրամայէ ժողովանէն զուրս հանել զԱմբրոսիոս Վրգ.:

Ժողովը գլխովին կը յուզի:

Երեսփոխաններէն շատեր կը միջամտեն յուզմունքը հանդարտեցնելու համար եւ մասնաորարար Աղարէզեան Մ. էֆ. կաղաչէ թախանձանօք զՍրբազան Նախագահ ներումն չընորհել Ամբրոսիոս Վրգ. ի: Ամբրոսիոս Վրգ. Նախագահ Սրբազան շոր աջն համարելով նեւրումն կընդունի եւ ժողովը կը հանդարտի:

Այն ինչ Ս. Նախագահ խօսք կ'առնու եւ կ'սկսի խօսիլ, Պէկեան էֆ. դուրս կ'ելնէ ժողովոյ շրջանակէն եւ ժողովրդեան մէջ կը մտնէ: Խօժասարեան էֆ. դիտել կուտայ այս պարագան, որոյ կը ձայնակցի Տ. Ղեւոնդ Վրգ. Ատենապետ էֆէնտին բացատրութիւն խնդրելով Պէկեան էֆ. ի ընթացքին վրայ:

Պէկեան էֆ. ներս դալ շուզէր, Տ. Ղեւոնդ Վրգ. զանի յեղափոխական կը կոչէ: Պէկեան էֆ. կը բողոքէ եւ կակնարկէ թէ բոնարարութեան փորձ արուեցաւ երեսփոխանի մը վրայ:


Քանի մի Երեսփոխանք բացատրութիւններ կուտան անհատականաբար կերպով:

Խօժասարեան էֆ. պաշտպանելու կ'ելնէ զԱմբրոսիոս Վրգ. կամ լաւ եւս զՍրբազան Պատրիարք ամբաստանելու:

Փախաղեան Ս. էֆ. բացատրութիւն տալու կ'ելնէ Ս. Նախագահին ըրածին վրայ, եւ շփոթութիւնը վերստին կը արթնէ ժողովոյն մէջ:

Ատենապետ էֆ. կը ջանայ խաղաղութիւնը վերահաստատել, բայց ի դուր կը աքնի. ատենանք դոցելու որոշեալ ժամն ալ արդէն հասած լինելով, ատենանք կը փակէ ժամ 10 ին:

ՓՈՒ. ԱՏԵՆԱՊԵՏ ԱՏԵՆԱԳԻՐ
Խ. ՕՍԿԱՆԵԱՆ Յ Ը. ՄԵՐԵԼՄ-ԳՈՒԼԻ



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և կը գտնուի
Եկեղեցեաց բանկալները :